

Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը
 հայտարարում է 2015-2016 ուսումնական տարվա ասպիրանտուրայի
 ընդունելությունը՝ նպաստի ձևով ուսման վճարի փոխհատուցմամբ,
 հեռակա ուսուցմամբ անվճար հիմունքով հետևյալ
 մասնագիտությունների գծով

Մասնագիտության դասիչը	Մասնագիտությունը	Հեռակա տեղեր
Ը.00.01.	Ընդհանուր տնտեսագիտություն -տեսական տնտեսագիտություն	2
Ը.00.02.	Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում -բնօգտագործման տնտեսագիտություն -գործարար կառավարում -մակրոէկոնոմիկա -միկրոէկոնոմիկա - մարքեթինգ	1 1 1 1 1
Ը.00.03.	Ֆինանսներ, հաշվապահական հաշվառում -ապահովագրական գործ - բանկային գործ -կառավարչական հաշվառում և աուդիտ -վիճակագրություն -ֆինանսներ	1 1 2 2 (1 տեղը՝ ԼՂՀ) 2
Ը.00.06.	Միջազգային տնտեսագիտություն	3 (1 տեղը՝ ԼՂՀ)
Ը.00.08.	Մաթեմատիկական տնտեսագիտություն -տնտեսական ինֆորմատիկա և տեղեկատվական համակարգեր	1
Ընդամենը՝	-----	19

Առանց ուսման վճարի փոխհատուցման (վճարովի), հեռակա ուսուցման ասպիրանտուրայում ընդունելությունը կատարվում է բոլոր մասնագիտությունների գծով՝ առանց սահմանափակումների:

Փաստաթղթերն ընդունվում են հայտարարության հրապարակման օրից մինչև հոկտեմբերի 31-ը ներառյալ:

Հասցեն՝ ք. Երևան –25, Նալբանդյան 128, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան
 հեռախոս՝ 593-454
 Ռեկտորատ

Ասպիրանտուրա ընդունվելու համար անհրաժեշտ
փաստաթղթերի ցանկ

ա) Դիմում՝ ՀՊՏՀ ռեկտորի անունով

բ) Բարձրագույն կրթության դիպլոմի և դրա հավելվածի պատճենները (օտարերկրյա պետություններում բարձրագույն կրթություն ստացածների համար՝ փաստաթուղթ նրանց կրթության համարժեքության մասին):

գ) Հրատարակված գիտական աշխատությունների, գյուտերի, հայտնագործությունների և գիտահետազոտական աշխատանքի մասին հաշվետվությունների ցուցակը կամ ընտրած մասնագիտությունից գիտական ռեֆերատ:

դ) Օտար լեզվի (անգլերեն՝ IBT) և ինֆորմատիկայի (համակարգչից օգտվելու հմտությունների) տարբերակված ստուգաթղթերի արդյունքները:

ե) Որակավորման քննությունների հանձնման մասին վկայական (եթե դրանք հանձնված են):

զ) Կադրերի հաշվառման անձնական թերթիկ, ինքնակենսագրություն և 4 լուսանկար (3x4 չափսի):

է) Քաղվածք աշխատանքային գրքույկից (եթե դիմորդն աշխատում է):

Դիմորդն անձնագիրը և բարձրագույն կրթության դիպլոմը ներկայացնում է անձամբ: